Ս.ՇՏԻԿՅԱՆ

ՈՉ ԵՐԱՆԻ ԱՅՆ ԾԱՆՐ ՕՐԵՐԻՆ

(Վահրամ Ալազանի ծննդյան 90-ամյակի առթիվ)

Իրադարձությունները ծավալվեցին մեր տանը 1954 թվականի կեսերին, երբ մեր ընտանիքի մտերիմն ու հորս հնամենի ընկերը՝ Վահրամ Ալազանը, իր անբաժանելի կողակցի՝ Մարոյի հետ, արդեն որերորդ անգամ սկսեցին այլևայլ դրվագներ պատմել սիբիրյան աքսորի իրենց ոդիսականից։ Այս ժամանակ էլ, ահա, Ալազանը պատմեց, որ հեռավոր Կրասնոյարսկում աքսորված ժամանակ, երբ լուր ստացվեց «Ժողովուրդների իմաստուն առաջնորդ» Իոսիֆ Ստալինի մահվան մասին, որն, ինչպես հայտնի է, տեղի է ունեցել 1953 թվականի մարտի 5-ին, ինքն այդ առիթով գրեց մի քառյակ-էքսպրոմտ։ Այն իր կտրուկ «հակաստալինյան» իմաստի պատճառով ժամանակին, հասկանալի է, չէր կարող հրատարակվել, հետագա տարիներին էլ ինչ-ինչ պատճառներով լույս աշխարհ գալու բախտին չի արժանացել։ Ի դեպ նշեմ, որ վերոհիշյալ էքսպրոմտը կարդացվել է 1961 թվականին, Հայաստանի գրողների միության՝ անհատի պաշտամունքի քննադատությանը նվիրված կուսակցական ժողովում և կարդացողն էլ ինքը՝ Ալազանն է եղել։

- Ես հիմա այդ էքսպրոմտը կարտասանեմ ձեզ համար, – իր խոսքը շարունակեց Ալազանը և կես-կատակ, կես-լուրջ դարձավ ինձ, – տեսնենք ինչ կասի մեր երիտասարդ գրականագետը։

Եվ նա, չթաքցնելով հուզմունքը, սկսեց.

ՍՏԱԼԻՆԻՆ

Քո «մարդասեր» խոսքերից լոկ արյուն էր կաթում,

«Հայր», «ուսուցիչ», «առաջնորդ» - դեղնադեմ դահիճ,

Թաթդ խորը մխրճած արյան մակարդում,

Գայլը եղավ քեզ դայակ, իսկ բորենին՝ ուսուցիչ։

... Նոր էի ավարտել Պետական համալսարանի բանասիրական ֆակուլտետը, միտքս սնել էի հայկական, ռուսական ու եվրոպական դասականների լավագույն ստեղծագործություններով, դաստիարակվել էի այդ ոճով ու ոգով, ուստի զարմանալի չպիտի լինի, որ կարծիքս, քիչ այժմյան ոճով ասած, միանշանակ եղավ։

- Թույլ քառյակ է ու հետո էլ մի տեսակ բամբասանքի տպավորություն է թողնում։

Ալազանն ինձ նայեց, եթե կարելի է այսպես ասել, ներողամիտ-ողբերգական հայացքով, երկար ժամանակ լռեց, ապա ուղղակի դարձավ ինձ.

- Իսկ դու գիտե՞ս, ահեղ քննադատ Սուրեն Շտիկյան, թե այդ էքսպրոմտը ինքնահաստատման ինչպիսի զարմանալի ճանապարհ է անցել։

- Իհարկե չգիտեմ, – անմիջապես հետաքրքրվեցի ես, - և որտեղից ես կարող էի իմանալ։

Ալազանը դարձյալ ժպտաց իր տխուր-ներողամիտ ժպիտով, ավելի հարմար տեղավորվեց բազկաթոռին ու սկսեց...

* * *

Բոգուչանի քաղաքի (Կրասնոյարսկի երկրամաս) ազատ աքսորում տեղավորված կալանավորները պաշտոնապես բաժանվում էին երկու խմբի՝ քրեական և քաղաքական հանցագործներ։ Քրեականները՝ պրոֆեսիոնալ գողեր էին, մարդասպաններ, ռեցիդիվիստներ, որոնցից յուրաքանչյուրը նստել էր արդեն մի քանի անգամ և ազատվելու մասին առանձնապես չէր էլ մտածում։ Սրանք աքսորավայրի տեր ու տիրականն էին, նույնիսկ վարչակազմը զգուշանում, ավելի ճիշտ՝ վախենում էր նրանցից, քանզի սրանց մեծ մասը գրպանում դանակ ուներ, որն առաջին իսկ առիթով գործի էր դրվում։

Մյուս խումբը քաղաքական հանցագործներն էին, որոնց նկատմամբ կիրառվում էին ամենաանմարդկային դաժանություններ։ Եվ սա հասկանալի էր ու պատճառաբանված։ Չէ՞ որ «քաղաքականները» խորհրդային կարգերի թշնամիներ էին, «կուսակցական գծի հակառակորդներ», «մենշևիկ-էսսեռական վիժվածքներ»... Ազատ

աքսորում մեկից ավելի էին, օրինակ, այն «քաղաքականները», ովքեր «առանց ստիպելու և հարկադրանքի» ստորագրել էին իրենց ներկայացված մեղադրական եզրակացությունները, ըստ որի իրենք մտադրվել էին սպանել Ստալինին, Բերիային, Մոլոտովին և արտասահմանին էին վաճառել մեր երկրի ռազմական գաղտնիքները, կամ կազմակերպել էին պաշտպանական բնույթի օբյեկտների պայթեցումներ ու հրկիզումներ։ Դրանցից մեկն էլ ես էի՝ Վահրամ Ալազանս, որ «առանց ստիպման ու հարկադրանքի» ստորագրել էի մեղադրական եզրակացությունս այն մասին, որ եղել եմ Աղասի Խանջյանի և Սահակ Գաբրիելյանի ղեկավարած «աջ տրոցկիստական, նացիոնալիստական, տեռորիստական լրտեսական, դիվերսիոն» կազմակերպության անդամ, որն իր առջև նպատակ էր դնում զինված ապստամբության միջոցով Հայաստանում տապալել Խորհրդային իշխանությունը և վերականգնել կապիտալիստական կարգերը։

Այսպիսի «դրախտային» պայմաններում էինք ահա, երբ 1953 թվականի մարտի սկզբներին լուր տարածվեց, որ Ստալինը ուղեղի կաթված էր ստացել և վիճակը գրեթե անհույս էր։ Չանցած մի քանի օր իմացանք, որ «մարդկության գերհանճարը» վախճանվել էր։

Վախճանվելը՝ վախճանվել, բայց դա ամենևին էլ դեռ անհատի պաշտամունքի վերանալ չէր նշանակում։ Ընդհակառակը, այն ծավալվեց նոր ուժով։ Դեռ տարիներ պիտի անցնեին, դեռ պիտի գար 1962 թվականը, կոմունիստական կուսակցության 22-րդ համագումարը, որի ժամանակ հիմնավորապես դատապարտվեց Ստալինի անձի պաշտամունքը իր բոլոր արատավոր հետևանքներով։

Բայց այն ժամանակ և այն պայմաններում շատ էլ դժվար չէ պատկերացնել իմ քաղաքական խիզախությունը, երբ ես՝ աքսորականս, այն էլ «քաղաքական կալանավորս» գրեցի վերոհիշյալ քառյակ-էքսպրոմտը։

Գրեցի, խնամքով մշակեցի և, վերջնական տեսքի բերելուց հետո, հանձնեցի Մարոյին ի պահ։ Հավելեմ նաև, որ քաղաքական կալանավորներին խստիվ արգելված էր իրենց մոտ թուղթ ու գրիչ ունենալ, և ես բանաստեղծությունները «գրում» էի մտքումս, մտքում էլ կատարում էի բոլոր հնարավոր ուղղումներն ու լրացումները, և

վերջնականապես ավարտված բանաստեղծությունը արտասանում էի Մարոյի մոտ այնքան, մինչև վերջինս այն անգիր կաներ։ Նույնը եղավ նաև այս անգամ։ Չմոռացա ամենայն խստությամբ պատվիրել Մարոյին, որ ոչ ոքի մոտ և ոչ մի տեղ այդ մասին բառ անգամ չասի, առավել ևս՝ հանկարծ չարտասանի։

Ինչքան ժամանակ անցավ, դժվարանում եմ ասել։ Ապրիլյան մի օր, աղյուսի գործարանում աշխատելիս, ինձ մոտեցավ բարեկամներիցս մեկը՝ վերահսկիչ Բաղալյանը։ Նայեց-քննեց աշխատանքս, գովեց ինձ, բայց տրտնջաց, որ ես առանց արտահագուստի եմ, և՝

- Գայլը քեզ դայակ լինի, Ալազան Վահրամ...

Սառեցի-մնացի տեղումս...

- Դու... դու այդ ի՞նչ ես ասում, Բաղալյան, – հազիվ ինձ հավաքելով արտաբերեցի ես։

- Քո գրած քառյակի մի տողը, – ասաց խոսակիցս ու հաղթականորեն հավելեց, – ամբողջ քառյակն էլ գիտեմ։

- Իսկ այդ քառյակը քեզ ո՞վ է ասել։

- Մարոն։

Պատկերացնում եք, չէ՞, իմ վիճակը։

Նախ, խնդրեցի-աղաչեցի Բաղալյանին, որ հանկարծ որևէ տեղ չարտասանի, որովհետև մեզ՝ «քաղաքականներիս», արդեն ծուռ աչքով են նայում և նման փաստը արդեն բավական էր մեր նկատմամբ թեկուզ «Զբոսանքի ակցիա» իրականացնելու համար։ «Զբոսանքի» էությունը հետևյալն էր. նախապես ընտրված խմբին մերկ վիճակում դուրս էին բերում զբոսանքի մի քանի ժամ... 25-30 աստիճան սառնամանիքի պայմաններում։

Երեկոյան շատ սուր խոսակցություն ունեցա Մարոյի հետ, թեև նա երդվեց-հավատացրեց, որ այդ քառյակը ինքը միայն Բաղալյանի մոտ է արտասանել և ընդամենը մեկ անգամ։

Քիչ-շատ միամտված ու հանգստացած՝ կրկին շարունակեցի աշխատանքս աղյուսի գործարանում։ Կրկին անցան օրեր։

Մի երեկո մեզ հյուր եկավ մեր անզուգական հարևանուհին՝ Պաննա Միխայիլովնան։ Դեռ աթոռին չնստած՝ դարձավ ինձ.

- Ինչպես եք Ալազան, «դեգնադեմ դագիչ»։

Վայրկյանի ինչ-որ մի հատվածում հասկացա, որ Պաննա Միխայիլովնայի ասած «դեգնադեմ դագիչը» իմ քառյակ-էքսպրոմտի «դեղնադեմ դահիճն է», ռուսերեն հնչողությամբ և ուրեմն...

Իմ վիճակը դարձյալ լավ եք պատկերացնում, այնպես չէ՞։

- Դուք դա որտեղից գիտեք, Պաննա Միխայիլովնա։

- Միայն ես չգիտեմ, – մեր հարևանուհին ծիծաղեց, – ճամբարի բոլոր աքսորականներն էլ գիտեն։ Դե լավ, Ալազան, շատ մի անհանգստանա, – նկատելով իմ հուզմունքը շարունակեց նա, – ամեն ինչ շատ որոշակիորեն հոգուտ ձեզ է գնում և տագնապելու կարիք չկա։

Եվ իրոք, ժամանակն իսկապես հոգուտ մեզ՝ կալանավորներիս էր աշխատում։ Ստալինի մահվանից քիչ անց հրատարակվեց «Պրավդայի» հայտնի առաջնորդողը, որտեղ խստորեն դատապարտվում էր անձի պաշտամունքը, դրան էլ հաջորդեց համաժողովրդական դահիճ, ճիվաղ Բերիայի բանտարկությունը, ապա նրա դատավարությունն ու գնդակահարությունը, դրան էլ հաջորդեց Կենտկոմի նորընտիր քարտուղար Նիկիտա Խրուշչովի հայտնի ճառը անհարկի ռեպրեսիաների մասին... Բոգուչանիի ազատ աքսորում արդեն բացահայտորեն խոսակցություններ էին գնում տուն վերադառնալու, սիբիրյան աքսորից ազատվելու մասին։

Այսպիսին էին իրադարձությունները, երբ աշխարհ եկավ 1954 թվականի մարտի 5-ը՝ բոլորեց Ստալինի մահվան մեկ տարին։ Եվ սխալված չեմ լինի, եթե ասեմ, որ դա Բոգուչանիի կալանավորների համար ամենաերջանիկ օրն էր։ Դեռ առավոտվանից ինքնաբերաբար հավաքվեցինք մեր փայտաշեն ակումբում։ Կալանավորներն իրար շնորհավորում էին, համբուրվում ու լալիս, «բարի» խոսքերով հիշում էին հանգուցյալին, այնուհետև իրար հաջորդեցին «մեծ առաջնորդին» քննադատող ելույթները։ Անսպասելիորեն բեմահարթակ բարձրացավ Բադալյանը։

- Ընկերներ, – հուզված սկսեց նա, – այստեղ մեզ հետ է բանաստեղծ Վահրամ Ալազանը, որը դեռ մի տարի առաջ էքսպրոմտ-քառյակ է գրել ժողովուրդների այդ մեծ դահճի մահվան առթիվ և որը մենք՝ բոլորս էլ անգիր գիտենք: Ընդամենը մեկ տարի առաջ այն դեռ արտասանել չէր կարելի, որովհետև անձի պաշտամունքը դեռ մնում էր ուժի մեջ, իսկ հիմա ժամանակները հիմնովին փոխվել են: ՈՒրեմն եկեք բարձրաձայն և առանց վախենալու արտասանենք այն:

Եվ բեմահարթակից դիրիժորի նման չափ տալով՝ Բաղալյանը սկսեց.

- Քո «մարդասեր» խոսքերից...

... Զարմանքից չռված աչքերով նայում եմ աջ ու ձախ: Արտասանում են բոլորը, արտասանում են խրոխտ, հանդիսավոր, ասես մի մարդ դարձած միասնական մի տակտով, և, որ պարզապես ապշեցրեց ինձ, արտասանում են նաև ռուսները, ուկրաինացիները, հրեաները, կալանավորներ, որոնք հայերեն մեկ հատիկ բառ անգամ չգիտեին:

Դուք այստեղ էլ իմ վիճակը լավ եք պատկերացնում, այնպես չէ՞:

Հայք, 1993, № 24, մայիսի 15